ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«16» դեկտեմբերի 2013թ ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Մուսայելյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլակյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթի համաձայն, կից ներկայացվում է ՀՀ Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 21-Ա, 22-Ա, 23-Ն 25-Ն որոշումները:

Առդիր՝ 14 թերթ:

Հարգանքով՝ Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

16.12.13 10226-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«10» դեկտեմբերի 2013 թվականի թիվ 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի ղեկավարի 2014 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 39.20 %-ի չափով՝ 130000 (մեկ հարյուր երեսուն հազար) դրամ, բարձր լեռնային հավելում՝ 8000 (ութ հազար) դրամ, ընդամենը՝ 138000(մեկ հարյուր երեսուն ութ հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի ղեկավարի 2013 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հ. Սահակյան՝ կողմ ----------

Հ. Հակոբյան ՝ կողմ ----------

Ն. Վարդանյան՝ կողմ ----------

Յ. Վարդանյան՝ կողմ ----------

Ց. Հակոբյան ՝ կողմ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. Վարդանյան

«10» դեկտեմբերի 2013 թվական
գ. Մուսայելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«10» դեկտեմբերի 2013 թվականի թիվ 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 11 -Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 3 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյանի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2013 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 11 -Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հ. Սահակյան՝ կողմ ----------

Հ. Հակոբյան ՝ կողմ ----------

Ն. Վարդանյան՝ կողմ ----------

Յ. Վարդանյան՝ կողմ ----------

Ց. Հակոբյան ՝ կողմ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

«10» դեկտեմբերի 2013 թվական
գ. Մուսայելյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մուսայելյան համայնքի ավագանու 2013 թվականի
դեկտեմբերի 10 -ի թիվ 22-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Բարձր լեռնային հավելում (դրամ)	Ընդամենը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ								
1	Աշխատակազմի քարտուղար	1	90000	69.23	1	90000	8000	98000
2	Առաջատար մասնագետ-հաշվապահ	1	88000	67.69	1	88000	8000	96000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ								
3	Գրադարանավարուհի	1	65000	50.0	1	65000	8000	73000
Ընդամենը		3	243000	-	3		24000	267000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«10» դեկտեմբերի 2013 թվականի թիվ 23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 9-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 9-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հ. Սահակյան՝ կողմ ----------

Հ. Հակոբյան՝ կողմ ----------

Ն. Վարդանյան՝ կողմ ----------

Ց. Վարդանյան՝ կողմ ----------

Ց. Հակոբյան՝ կողմ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. Վարդանյան

«10» դեկտեմբերի 2013 թվական
գ. Մուսայելյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մուսայելյան համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 23 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար /4000/դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթ հազար / 7000/ դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար /10000/ դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ինն հազար /9000/ դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար /20000/ դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթ հարյուր /700/ դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար /1000/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն

չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ յոթ հարյուր/ 700/ դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար /1000/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝ տասը հազար / 10000/ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝ տասը հազար / 10000/ դրամ

Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար զրո /0/դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար /150 000/ դրամ.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային

գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է քառասուն հազար/40 000/ դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տասը հազար /10 000/ դրամ.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար/ 5 000/ դրամ:

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հարյուր/500/ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ինն հարյուր /900/ դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ երկու հարյուր /200/ դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար /1000/ դրամ

3) մեկ շաբաթվա համար՝ երեք հազար /3000/ դրամ

4) մեկ ամսվա համար՝ տասնհինգ հազար /15000/դրամ

5) մեկ տարվա համար՝ յոթանասուն հազար /70000/ դրամ

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսան հազար /20000/ դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար /50000 /դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար /200000 /դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ վեց հարյուր հազար /600000/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երեք հարյուր հազար /300000/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար /100000/դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար /1000/ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար /3000/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար /1000/ դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է զրո /0/ դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է յոթանասուն հազար /70000/դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է յոթ հազար /7000/ դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հիսուն հազար /50000/դրամ

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ երեսուն հազար դրամ /30000/դրամ

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ քսան հազար /20000/ դրամ

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական չորս հարյուրդրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ /15/ դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երկու հազար /2000/ դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ հինգ հազար /5000/ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 25-Ն

<<10>> դեկտեմբերի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի 2013 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հ. Սահակյան՝ կողմ ----------

Հ. Հակոբյան՝ կողմ ----------

Ն. Վարդանյան՝ կողմ ----------

Ց. Վարդանյան՝ կողմ ----------

Ց. Հակոբյան՝ կողմ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Վարդանյան

«10» դեկտեմբերի 2013 թվական
գ. Մուսայելյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Մուսայելյան համայնքի
ավագանու 2013 թվականի դեկտեմբերի10-ի
թիվ 25-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

Հ/հ	Եկամուտներ	Հոդվածի համարը	Ընդամենը /հազար դրամ/	Վարչական մաս /հազար դրամ/
1	2	3	4	5
1000	Ընդամենը եկամուտներ	-	7700.0	7700.0
1100	Հարկեր և տուրքեր	7100	3265.8	3265.8
1110	Գույքային հարկեր անշարժ գույքից	1731	13.8	13.8
1112	Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար		2352.8	2352.8
1120	Գույքային հարկեր այլ գույքից	7136	899.2	899.2
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		899.2	899.2
1130	Տեղական տուրք	7145	80.0	80.0
1250	Դոտացիա	7331	3516.2	3516.2
1330	Գույքի վարձակալության եկամուտներ, այդ թվում՝ համայնքի սեփականություն համարվող հողի վարձավճար	7415	838.0	838.0

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ, ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հ/հ	Ծախսի նվանումները	Հոդվածի համարը	Ընդամենը /հազար դրամ/	Վարչական մաս /հազար դրամ/
1	2	3	4	5
4000	Ընդամենը ծախսեր		7700.0	7700.0
4050	Ընթացիկ ծախսեր		7000.0	7000.0
4100	Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝		5405.0	5405.0
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	5000.0	5000.0
4112	Պարգևադրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	405.0	405.0
4212	Էներգետիկ ծառայություններ	4212	200.0	200.0
4214	Կապի ծառայություններ	4214	72.0	72.0
4220	Գործուղումների և շրջագայությունների ծախսեր		50.0	50.0
4221	Ներքին գործուղումներ	4221	50.0	50.0
4234	Տեղեկատվական ծառայություններ	4234	20.0	20.0
4250	Համակարգչային ծառայությոուններ	4232	15.0.	15.0.
4260	Նյութեր		750.0	750.0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստներ	4261	50.0	50.0
4264	Տրանսպորտային նյութեր	4264	300.0	300.0
4268	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	500.0	500.0
4634	Այլ նպաստներ բյուջեից	4729	600.0	600.0
4771	Պահուստային միջոցներ	4891	488.0	488.0

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. Վարդանյան